ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 65-67-րդ հոդվածները, Ազգային ժողովի 16.12.2016 թվականի թիվ ԱԺՈ-267-Ն որոշմամբ հաստատված «Ազգային Ժողովի աշխատակարգի» 24-րդ կետը, Ձեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կողմից առաջարկվող «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հարապետության օրենքի նախագիծը, օրինագծի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև «Հայաստան» խմբակցության որոշումը (նիստի արձանագրությունից քաղվածքը):

Տեղեկացնում ենք, որ օրենքի նախագծի հիմնական զեկուցողն է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադևոս Ավետիսյանը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

12.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*(Քաղվածք խմբակցության նիստի արձանագրությունից)*

Առաջնորդվելով Սահմանադրության 109-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 65-67-րդ հոդվածներով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ ««Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հարապետության օրենքի նախագծին (օրինագիծը և հիմնավորումը կցվում է) և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված օրենսդրական նախագծի հիմնական զեկուցողը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադևոս Ավետիսյանն է:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

12.02.2025թ.

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 233-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. 2021 թվականի հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 75 տոկոսի չափով (բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքի)։»։

Հոդված 2. Օրենսգրքի 233-րդ հոդվածը լրացնել 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. 2021 թվականի հաշվետու տարվա համար 200 միլիոն դրամից ավելի հարկման բազա ունեցող անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով։»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը). Նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետությունում փուլային եղանակով 2021 թվականից ներդրվող ֆիզիկական անձանց անշարժ գույքի հարկման բեռի աճի կասեցումն է 2026 թվականի հունվարի 1-ից, այսինքն՝ հերթական շուրջ 30 տոկոս գույքահարկի բեռի ավելացում նախատեսող օրենսդրական դրույթի վերացումը:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. 2022 թվականի հունիսի 25-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-332-Ն օրենքով նախատեսված է ֆիզիկական անձանց անշարժ գույքի հարկման նոր համակարգ, ըստ որի՝ 2021-2026 թվականներին այս գծով գույքահարկի բեռը նախատեսված է փուլային տարբերակով ավելացնել 5-6 անգամ: Հարկային այս բեռը առաջանցիկ և թռիչքաձև աճում է հատկապես՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական տարածքի բնակիչների համար, այդ թվում տարեց բնակչությունը, ովքեր ապրում են ժառանգաբար իրենց փոխանցված բնակարաններում:

Գույքահարկի բեռի էական և հակասոցիալական այս փուլային բարձրացումը ներկայացվում է «շքեղությունը» հարկելու քողի ներքո, որի հետ իրականում ուղղակի աղերս չունի այդ կարգավորումն՝ իր ողջ գործադրումով:

2020 թվականի հունվարի 1-ից պրոգրեսիվ եկամտային հարկի դրույքաչափերի համահարթեցումը՝ իրականացված հակասոցիալական փոփոխությունը, փորձ է արվում արդարացնել գույքահարկի այս փոփոխություններով, իբրև թե այսպիսով հնարավոր կդառնա ապահովել պետության՝ վերաբաշխման գործառույթի արդար և արդյունավետ իրականացումը: Իրականում՝ սոցիալապես անապահով քաղաքացիների՝ միայնակ թոշակառուների, աշխատող աղքատների և առհասարակ աղքատ ընտանիքների հարկային բեռն էապես ավելացնելու հաշվին ակնկալվում է համայնքային բյուջեների հարկային մուտքերի ավելացում:

Անցում է կատարվում շուկայականին մոտարկված արժեքների հիման վրա անշարժ գույքի հարկման համակարգին: Տարեց-տարի էապես բարձրանում է գույքահարկով հարկման բազան և դրույքաչափերը, որը հանգեցնելու է 5 տարում քաղաքացիների անշարժ գույքի հարկման բեռի պատիկներով ավելացման: Շքեղությունը հարկելու անվան տակ վերացվում են գույքահարկի չհարկվող շեմերը և այդպիսով նաև՝ հարկման սոցիալական այս բաղադրիչը:

Արդեն իսկ հարկվում են նաև ցածրարժեք բնակարան կամ բնակելի տուն ունեցող սոցիալապես անապահով քաղաքացիները, որոնք մինչ այդ ունեին գույքահարկով չհարկվելու արտոնություն: Սպասվող սոցիալական նոր դժգոհությունը մեղմելու համար էլ՝ որդեգրվեց խնդրահարույց այս փոփոխությունները նաև՝ փուլային

իրականացնելու «անցնցում» տարբերակը: Հիմա արդեն մոտենում ենք վերջին փուլին, որը նախատեսված է ավարտել 2026 թվականին:

Անցնող չորս տարիները ևս գործնականում ապացուցեցին, որ անշարժ գույքի հարկման նախատեսվող փոփոխություններն ինքնին խնդրահարույց են սոցիալական արդարության տեսանկյունից: Դրանք ի զորու չեն՝ վերականգնելու եկամտային հարկի համահարթեցման հետևանքով հարկային համակարգից վերացված սոցիալական հիմնական բաղադրիչը: Այսպիսով անհնար է նաև ապահովել եկամուտների արդարացի բաշխման «շատից՝ շատ, քչից՝ քիչ» հիմնարար սկզբունքը:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծով առաջարկվում է վերացնել աստիճանական ներդրվող՝ քաղաքացիների անշարժ գույքի հարկման բեռի թռիչքաձև ավելացման վերջին փուլը, բացառությամբ 200 միլիոն դրամից ավելի հարկման բազա ունեցող անշարժ գույքի հարկման դեպքի, որի պարագայում գործող կարգավորումներն առաջարկվում է թողնել անփոփոխ: Այսինքն, որպես փուլային ավելացման վերջին փուլ՝ 2026 թվականի հաշվետու տարվա համար՝ նախորդ տարվա համեմատ 200 միլիոն դրամից ավելի հարկման բազա ունեցող անշարժ գույքի հարկի չափը կավելանա ևս շուրջ 30 տոկոսով: Ընդ որում, ցածր եկամուտ ունեցող քաղաքացիների իրական եկամուտների առաջնահերթ և առաջանցիկ աճի ապահովումը պահանջում է ուղղակի հարկերի համար չհարկվող օբյեկտիվ շեմերի նախատեսում, եկամտային հարկի իրական պրոգրեսիվ դրույքաչափերի սահմանում և զուգահեռ՝ շքեղությունը հարկելու հասցեական մեխանիզմների ներդրում, այլ ոչ թե՝ մեկը մյուսով փոխարինում կամ այդ նպատակները գործնականում հասցեագրելու պարզ իմիտացիա:

4. Կարգավորման առարկան. Նախագծի կարգավորման առարկան օրենքով սահմանված՝ քաղաքացիների անշարժ գույքի հարկման (գույքահարկի) բեռի թռիչքաձև աճերի օրենսդրական պահանջն է, որի գործադրումը նախատեսված է փուլային տարբերակով:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կասեցնել 2021 թվականից տարեց-տարի ֆիզիկական անձանց համար զգալի չափերով ավելացող անշարժ գույքի հարկման բեռի աճը, որն ունի հակասոցիալական և անարդար բնույթ և արդեն իսկ անտանելի է դարձել հատկապես անապահով խավի քաղաքացիների համար: Այսինքն՝ նախագծի ընդունմամբ ակնկալվում է վերացնել 2026 թվականի հունվարի 1-ից հերթական շուրջ 30 տոկոսի չափով գույքահարկի բեռի ավելացում նախատեսող օրենսդրական դրույթը:

6. Նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի պահանջում, իսկ դրա ընդունմամբ պայմանավորված՝ 2025 թվականի պետական բյուջեի եկամուտների էական նվազեցում կամ ծախսերի ավելացում տեղի չի ունենա:

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում այլ օրենքներում փոփոխություններ չեն նախատեսվում, սակայն պետք է ընդունվեն օրենքի կիրարկում ապահովող կառավարության որոշումներ:

# ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 233. Տեղական բյուջե վճարման ենթակա անշարժ գույքի հարկի գումարի հաշվարկման կարգը**

1. Անշարժ գույքի հարկը հաշվարկվում է անշարժ գույքի՝ հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի (արժեքների) և Օրենսգրքի 229-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 234-րդ հոդվածի դրույթները: Գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար անշարժ գույքի հարկը հաշվարկվում է դրա հաշվարկային զուտ եկամտի և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափի արտադրյալի չափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված արտոնությունները և Օրենսգրքի 234-րդ հոդվածի դրույթները:

2. Օրենսգրքի 231-րդ հոդվածով սահմանված կարգով անշարժ գույքի հարկի պարտավորության առաջացման կամ անշարժ գույքի հարկի հաշվարկման դադարման դեպքերում սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան հաշվարկված՝ անշարժ գույքի հարկի տարեկան, իսկ կազմակերպությունների դեպքում կիսամյակային գումարները ճշգրտվում են տվյալ հարկային տարվա, իսկ կազմակերպությունների դեպքում՝ հաշվետու կիսամյակի ընթացքում անշարժ գույքի հարկի վճարման պարտավորությունների առաջացման կամ անշարժ գույքի հարկի հաշվարկման դադարման ամիսներին համամասնորեն:

3. Հաշվառող մարմինները, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնից Օրենսգրքի 235-րդ հոդվածով սահմանված կարգով ստացված տեղեկությունները, սույն բաժնով սահմանված կարգով հաշվարկում են անշարժ գույքի հարկ վճարողների անշարժ գույքի հարկի գումարները, և հաշվարկված անշարժ գույքի հարկի գումարների վերաբերյալ տեղեկությունները մինչև ընթացիկ հարկային տարվա նոյեմբերի 1-ը փակցնում են համայնքի վարչական շենքի տեսանելի տեղում և (կամ) տեղադրում են իրենց էլեկտրոնային կայքերում: Հաշվառող մարմինները կարող են նաև սույն մասում նշված ժամկետում անշարժ գույքի հարկ վճարողներին ներկայացնել անշարժ գույքի հարկի վճարման ծանուցագրեր (այդ թվում՝ ուղարկել փոստով կամ հանձնել առձեռն):

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում տեղեկություն չփակցնելը կամ ծանուցագիր չներկայացնելը անշարժ գույքի հարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

5. Անշարժ գույքի հարկ վճարողներն անշարժ գույքի հարկի գծով իրենց պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու նպատակով կարող են դիմել հաշվառող մարմիններին: Հաշվառող մարմինները նշված տեղեկանքները կամ տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

6. Անշարժ գույքի հարկի հաշվարկի հետ չհամաձայնելու դեպքում անշարժ գույքի հարկ վճարողները հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի մասով անշարժ գույքի հարկի հաշվարկի ճշգրտման նպատակով կարող են դիմել համապատասխան հաշվառող մարմիններին, իսկ հարկման բազայի ճշգրտման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ ստանալու նպատակով կարող են դիմել անշարժ գույքի կադաստր վարող մարմին: Հաշվառող կամ լիազոր մարմինները նշված տեղեկությունները տրամադրում են դիմումները ստանալուց հետո` երեք աշխատանքային օրվա ընթացքում:

~~7. 2021 թվականի հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար` 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար` 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար` 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար` 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար` 100 տոկոսի չափով:~~

***(233-րդ հոդվածը խմբ., լրաց. 25.06.20 ՀՕ-332-Ն, լրաց. 16.12.22 ՀՕ-563-Ն)***

7. 2021 թվականի հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար` 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար` 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար` 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար` 75 տոկոսի չափով (բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքի):

8. 2021 թվականի հաշվետու տարվա համար 200 միլիոն դրամից ավելի հարկման բազա ունեցող անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար` 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար` 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար` 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար` 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար` 100 տոկոսի չափով: